

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2012 թվականի մարտի 21-ին

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում գտնվող (հաշվառված) գույքի և հողամասերի համար 2011 թվականի հունվարի 1-ին նախորդող հաշվետու ժամանակաշրջանների գույքահարկի և հողի հարկի վճարման պարտականություն ունեցող անձանց վրա:

Հոդված 2. Հողի հարկ և գույքահարկ վճարող անձինք ազատվում են իրենց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի 2008 թվականի հունվարի 1-ին նախորդող հաշվետու ժամանակաշրջանների համար սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին չվճարված գույքահարկից և հողի հարկից, ինչպես նաև այդ պարտավորությունները սահմանված ժամկետներում չվճարելու համար հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժերից և տուգանքներից: Սույն հոդվածում նշված գույքահարկի և հողի հարկի պարտավորությունները տեղեկատվական ավտոմատացված համակարգերից դուրս գրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում:

Հոդված 3. 2008 թվականի հունվարի 1-ից մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար համայնքների վարչական սահմաններում գտնվող (հաշվառված) գույքի և հողի համարգույքահարկի և հողի հարկի գումարները մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ վճարած ֆիզիկական անձինք ազատվում են գույքահարկը և հողի հարկը սահմանված ժամկետներում չվճարելու համար 2008 թվականի հունվարի 1-ից մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների մասով հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից, եթե սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին (ներառյալ մինչև 2008 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար) շինությունների համար չվճարված գույքահարկը կամ հողամասերի համար չվճարված հողի հարկը և դրանց մասով հաշվարկված տույժերը չեն գերազանցում 1 մլն Հայաստանի Հանրապետության դրամը, իսկ փոխադրամիջոցների համար՝ 0,5 մլն Հայաստանի Հանրապետության դրամը:

Հոդված 4. Սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված ժամկետը չի տարածվում գույքահարկի և հողի հարկի վճարման պարտավորություն ունեցող այն ֆիզիկական անձանց վրա, ովքեր մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ հողի հարկի և գույքահարկի չվճարված գումարների վճարումն ապահովելու նպատակով իրենց հաշվառող մարմինների հետ կնքել են ժամանակացույց, ըստ պարտավորությունների ծավալների (ներառյալ տույժերը), հետևյալ ժամկետներով՝
1) մինչև երեք հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամի դեպքում՝ 3 ամիս ժամկետով.
2) երեք հարյուր հազարից մինչև հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամի դեպքում՝ 6 ամիս ժամկետով.
3) հինգ հարյուր հազարից մինչև մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի դեպքում՝ մեկ տարի ժամկետով:

Սույն հոդվածում նշված ժամանակացույցի ժամկետների հաշվարկը սկսվում է 2013 թվականի հունվարի 1-ից:
Սույն հոդվածում նշված ժամանակացույցը կազմվում է ըստ եռամսյակների, վճարման ենթակա գումարի (առանց տույժերի) համամասնական բաշխումով, եռամսյա վճարումների պարտադիր կատարման պայմանով: Սույն հոդվածով սահմանված կարգով կնքված ժամանակացույցով նախատեսված եռամսյակի ավարտից մեկ ամսից ավելի ուշացնելու կամ չկատարելու դեպքում գույքահարկի և հողի հարկի չվճարված գումարները և դրանց չվճարման համար հաշվարկված տույժերը գանձվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված ընդհանուր կարգով:

Հոդված 5. Գույքահարկ և հողի հարկ վճարող այն ֆիզիկական անձինք, որոնք մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ փաստացի կատարել են 2008 թվականի հունվարի 1-ից մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար համայնքների վարչական սահմաններում գտնվող (հաշվառված) գույքի և հողի համար գույքահարկի և հողի հարկի վճարումները, սակայն ունեն դրանց մասով հաշվարկված և չվճարված տույժեր, սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ազատվում են չվճարված տույժերը վճարելուց:

Հոդված 6. Գույքահարկ և հողի հարկ վճարող ֆիզիկական անձանց 2008 թվականի հունվարի 1-ից մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող գույքահարկի և հողի հարկի համար հաշվարկված և մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում վճարված տույժերի գումարները հաշվանցվում են տվյալ հարկ վճարողների գույքահարկի և հողի հարկի գծով ընթացիկ կամ առաջիկա վճարումների հաշվին:

Հոդված 7. Սույն օրենքով տրամադրվող գույքահարկի և հողի հարկի վճարման պարտավորության դադարեցման հետևանքով համայնքների չստացած գումարները փոխհատուցման ենթակա չեն «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող` Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
Նախագահ**

Ս. Մարգարյան

2012 թ. ապրիլի 10
Երևան
ՀՕ-93-Ն